<<Հաստատում եմ>>

Եղվարդի համայնքի ղեկավար

_____Ն. Սարգսյան

<< 04 >> հունիս 2020թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N <<ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/7>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Եղվարդի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:**

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Եղվարդ համայնքի **Բուժական բնակավայրի խմելու ջրագծի և <<Եղվարդի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի բակի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.** <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2020 թվականի մայիսի 19-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.** Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. **Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.** <<ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/7>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով երկու հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	գտնվելու վայրը (հասցեն)	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ	4davtyan4.44@gmail.com	ՀՀ	000125365
2	<<ՋԻՆՋ>> ՍՊԸ	info@jinjconsult.com	ՀՀ	000125305

6. **Հայտով ներկայացված գները.**

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում			
		ինքնարժեք	շահույթի	ԱԱՀ	Ընդհանուր գին
Չափաբաժին 1					
1	<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ	300 000	184 000	-	484 000
[illegible]	[illegible] ՍՊԸ	900 000	50 000	190 000	1 140 000

Չափաբաժին 2					
1	<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ	200 000	144 000	-	344 000
2	<<ՋԻՆՋ>> ՍՊԸ	970 000	50 000	204 000	1 224 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **2020 թվականի մայիսի 26-ի թիվ 2** որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 և N2 չափաբաժինների մասով **<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ** -ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/7>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1 և 2

2020 թվականի հունիսի 2- ին Գնորդ՝ **Եղվարդ համայնքապետարանի**, որը գտնվում է **ք.** Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Վաճառող՝ **<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ** -ի, որը գտնվում է **ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թղմ., 32շ., բն. 45** հասցեում, միջև կնքվել է Եղվարդ համայնքի կարիքների համար **նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պետական գնման** պայմանագիր N <<ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/7>>: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **828 000 (ութ հարյուր քսանութ հազար)** ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Վ. Վիրաբյան**

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)